ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 222

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքը (Դվին բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Արտաշատ համայնքի (Դվին բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքը (Դվին բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը*՝

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի (Դվին բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
03-040-0205-0071 կադաստրային ծածկագրով 0.02883 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք	03-040-0205-0071 կադաստրային ծածկագրով 0.02883 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ապահովելով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված պահանջները (կցվում է):

4. Արտաշատ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Դվին բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի (Դվին բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «31» «մայիսի» 2024 թ.